Հորինուկների Անթոլոգիա

Կազմեց՝ Աշխեն Թադևոսյանը

Երևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԻԳ

Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը. այս ամենն ամբողջանում է այն ուսուցչի մեջ, ով սիրում է երեխաների մաքուր, անկեղծ ու լուսավոր աշխարհը: Հենց այդ միջավայրն է ստիպում ուսուցչին անել անհնարինը: Կրթահամալիրում սովորողներն ունեն մտածելու, զգալու, ստեղծագործելու հնարավորություն:

Հեղինակային կրթության շնորհիվ նրանց մեջ ձևավորվում է տրամաբանելու, մտածելու, ստեղծելու, խաղալու կարողությունը: Ուսուցչի ամենագլխավոր պարտականությունը

սաներին մտավոր աշխատանքին վարժեցնելն է և որ այդ պարտականությունն ավելի կարևոր է, քան բուն առարկայի դասավանդումը: Սովորողների ստեղծագործական աշխատանքների, մտքի վառ երևակայության, տաղանդի ոգեշնչումից էլ հենց ծնվեց այս «Հորինուկների Անթոլոգիա»-յի հրատարակման նախագիծը:

Անթոլոգիան կարող եք կարդալ նաև օնլայն հարթակում՝
https://tadevosyanashxen.wordpress.com/ (բլոգի «Հորինուկներ» բաժնում):

Հաճելի ընթերցում բոլորին:

ԱՇԽԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Անժել Դանիելյան

Ես Անժել Դանիելյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի փետրվարի 20-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Լեոնարդո Դա Վինչի» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել, կարել և նկարել: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ նկարչուհի: Ես ազատ ժամանակ կարդում եմ, լինում է նաև, որ կիսատ դասերս եմ ավարտում, ընկերուհուս հետ եմ խաղում, մի քիչ էլ պարապ նստում եմ: Ես ուզում եմ ունենալ շա՛տ թմբլիկ գերմանամուկ: Սիրում եմ ճամփորդել, սիրում եմ հայտնաբերել նոր

ինֆորմացիա, որը ես չգիտեի: Ես կարդացել եմ բազում գրքեր: Հայրիկիս էլ ասում եմ, որ ինձ գիրք գնի: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ համակարգչային ուսուցողական խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://anzheldanielyan.edublogs.org/

Շոկոլադե Չառլին

Լինում է, չի լինում, մի շոկոլադե մարդ է լինում։ Նրա անունն էր Չառլի։ Չառլիին դպրոցում սիրում էին, որովհետև նրան ամեն վայրկյան կարող էին ուտել։ Մի անգամ Չառլին որոշեց ճամփորդել, որպեսզի գտնի իր քաղաքը։ Նա ծնողներին մի նամակ էր թողել, որտեղ գրված էր սա. «Մայրի՛կ, հայրի՛կ, ես գնացել եմ ճամփորդելու և գտնելու իմ աշխարհը։ Դուք մի վախեցեք, դա անվտանգ է»,- կարծում էր նա…

Ճանապարհին, Չառլիի դիմաց կագնեց մի ծերուկ։

– Ա՛յ քեզ բան, – բացականչեց ծերուկը, – աչքերիս չեմ հավատում, շոկոլադե մա՞րդ։

– Մի՛ վախեցիր ծերուկ, – ասաց Չառլին, – ես ընդամենը ուզում եմ գտնել իմ քաղաքը։

Ծերուկը զարմացել էր նրա համար, որովհետև գտել էր շոկոլադե թագավորի տղային։

– Դու թագավորի տղան չե՞ս,- հարցրեց ծերուկը.

– Ես չգիտեմ,- ցածր ձայնով պատասխանեց Չառլին։

– Այն, ինչ որ դու ասացիր, կասեր միայն շոկոլադե թագավորի տղան,- ասաց ծերուկը և Չառլիի հետ ճամփա ընկավ դեպի Շոկոլադե քաղաք։

Երբ նրանք հասան շոկոլադե քաղաքին, բոլոր շոկոլադե մարդիկ նայում էին Չառլիին և մտածում. «Միթե՞ թագավորի տղան գտնվել է…»։ Նրանք հասան շոկոլադե դղյակին։ Մի հերթ էր կանգնած դեպի դղյակը, որովհետև թագավորը հայտարարել էր. «Ով գտնի իմ տղային, նա կստանա իմ թագավորության կեսը»։ Եվ վերջապես հասավ Չառլիի հերթը։ Թագավորը միանգամից ճանաչեց Չառլիին.

-Այո՛,- բացականչեց թագավորը,- գտել են տղայիս, գտե՛լ, ուռա՛։

Թագավորը ուրախանում էր այնպես, ինչպես փոքրիկ երեխան է ուրախանում։ Ծերուկը այդքանը տեսնելով մտածեց, որ լավություն է արել թագավորին և չուզեց հարստությունը։ Նա գիտեր՝ ինչքան ծախս է տալիս երեխային պահելու համար…

Նարե Նահապետյան

Ես Նարե Նահապետյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի հունիսի 19-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի » կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «100 հեքիաթ շարքից 50 պատմություն արքայադուստրերի մասին» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, սիրում եմ օգնել մեծերին, երգել ու

պարել: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ երգչուհի և պարուհի: Ես ազատ ժամանակ խաղում եմ եղբորս հետ, լինում է նաև, որ իջնում եմ բակ, մայրիկիս եմ օգնում և տունն եմ կարգի բերում, մի քիչ համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ գեղեցիկ և փոքրիկ շնիկ, որպեսզի նրա հետ գնամ զբոսանքի: Սիրում եմ ճամփորդել, փորձում եմ իմանալ նոր ինֆորմացիա, որը ես չգիտեի: Ես կարդացել եմ ութ գիրք: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ բակում: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:
Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://narenahapetyan.edublogs.org/

Շոկոլադե ճանապարհ

Մի անգամ հայրիկիս հետ ճամփորդության ժամանակ հայտնվեցի մի զարմանալի երկրում: Այնտեղ մենք ապրում էինք հյուրանոցում: Այդ հյուրանոցի մեջ շատ զարմանալի բաներ կային օրինակ՝ թռչող մահճակալ, երգող պահարան, շարժվող հատակ և այլ հետաքրքիր բաներ: Ես և հայրիկս դասավորեցինք մեր իրերը, և քանի որ շատ հոգնած էինք պառկեցինք քնելու: Առավոտյան ես շուտ արթնացա մեզ համար թեյ պատրաստեցի, թխվածք պատվիրեցի և հայրիկիս արթնացրեցի: Մենք նախաճաշեցինք և դուրս եկանք զբոսնելու: Գնացինք այգի և այնտեղ տեսանք մի տարօրինակ դուռ: Բացեցինք դուռը,

մեր տեսածին չէինք հավատում։ Այնտեղ ուրիշ քաղաք կար, որի ճանապարհները շոկոլադից էին։ Մարդիկ անտարբեր անցնում էին և ոչ-ոք ձեռք չէր տալիս։ Երեխաներն ուրախ խաղում էին ու կարծես՝ չէին նկատում շոկոլադը։ Այդ պահին անցնում էր մի ծերունի։ Ես հարցրեցի նրան, թե ի՞նչ է կատարվում իրենց քաղաքում, և ինչո՞ւ են ճանապարհները շոկոլադից։ Ծերունին պատասխանեց, որ շատ տարիներ առաջ իրենց քաղաքում շոկոլադ չկար և մարդիկ չգիտեին՝ ինչ է դա։ Մի օր եկավ բարի փերին բացատրեց, թե ինչ է շոկոլադը և կախարդեց, որպեսզի մեր քաղաքում շոկոլադ լինի։ Եվ այսքան տարի մեր քաղաքի ճանապարհները պատված են շոկոլադով։ Ահա այսպիսի հետաքրքիր ճամփորդություն մենք ունեցանք և բացահայտեցինք շոկոլադե ճանապարհներով քաղաքը։

Վերգինե Բուղդարյան

Ես Վերգինե Բուղդարյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի հունվարի 17-ին Դիլիջանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Երկարագուլպա Պեպին» է: Ես

շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, նկարել, երգ լսել: Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ կահույքի դիզայներ կամ հոգեբան: Ես ազատ ժամանակ խաղում եմ, դասերս եմ սովորում, նկարում եմ, ընտանիքիքիս հետ տարբեր խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ շուն և սեփական սենյակ: Սիրում եմ այցելել տարբեր վայրեր, մաթեմատիկական խաղեր խաղալ: Ես կարդացել եմ բավականին շատ գրքեր: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ համակարգչային խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում, քանի որ իմ ուսուցիչները շատ հոգատար են և ուշադիր:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://verginebughdaryan.edublogs.org/

Կախարդական մայրիկը

Լինում է մի ընտանիք, որտեղ ապրելիս է լինում մի կախարդական մայրիկ: Ոչ ոք չէր հասկանում, թե ինչու էին նրան կախարդական մայրիկ կոչում: Ես հիմա նրա մասին ձեզ ամեն ինչ կպատմեմ: Նրան իզուր չէ, որ կոչում էին կախարդական, նա կարողանում էր վերածվել հրեշտակի, վեց ձեռքանի մայրիկի, որպեսզի իր երեխաներին ավելի արագ խնամի, գուրգուրի, բուժի, սփոփի, կարողանում էր վերածվել տասն աչքանի մայրիկի, որպեսզի ուշադիր իր երեխաներին հետևի: Նա միակն էր այդպիսին՝ կախարդական, նա նաև շատ ուժեղ էր, դե, ուզում եմ ասել, որ նրանց ընտանիքին կյանքում վտանգ չի սպառնացել և չի էլ սպառնալու: Նրանց մայրիկը նաև հրաշագործ էր, որը կախարդանքի միջոցով օգնում էր բոլորին: Լինում էր, որ վերածվում էր

սուպեր հերոսի, որից վախենալով՝ նրանց ընտանիքից հեռու էին մնում բոլոր չարագործներն ու սպառնալիքները: Եվ ամենազարմանալին այն էր, որ երբ նա տանը չէր, նրա պալատը վերածվում էր խրճիթի, այո՛, այո՛, նրա ընտանիքը ապրում էր խրճիթում, որը կախարդական մայրիկի ներկայությամբ պալատի էր վերածվում: Նրանց ընտանիքին երբեք տխուր չէիր տեսնի: Նրանք հպարտ էին, որ այդպիսի կախարդական մայրիկ ունեին:

Նունե Հարությունյան

Ես Նունե Հարությունյան եմ: Ծնվել եմ 2014 թվականին ապրիլի 24-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի » կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3.1 դասարանում: Իմ սիրած հեքիաթը « Ճամփորդները» հեքիաթն է: Ես սիրում եմ գրքեր կարդալ, նկարել, մարզվել և ուսումնասիրել մոլորակները: Որոշել եմ դառնալ ատամնաբույժ: Ես ազատ ժամանակ կարդում եմ, նկարում եմ և խաղում եմ քույրիկիս հետ:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://nuneharutyunyan.edublogs.org/

Իմ հեքիաթային ճամփորդությունը տիեզերքում



Մի անգամ ես ապրել եմ մի հրաշալի օր: Չգիտեմ դա երազ էր, թե իրականություն, բայց անմոռանալի օր էր: Պայծառ ու արևոտ առավոտ էր և թռչունների ծլվլոցից ես արթնացա: Բակում կանգնած էր մի փոքրիկ տիեզերանավ: Ես մտա այդ փոքրիկ տիեզերանավի մեջ և հարմարավետ նստեցի: Սեղմեցի կոճակը և տիեզերանավը ինձ բարձրացրեց երկինք: Սեղմեցի երկրորդ կոճակը և տիեզերանավը ինձ տարավ տիեզերք: Ես հայտնվեցի Քաղցր մոլորակում, այնտեղ ծառերը՝ շոկոլադից էին, տները՝ թխվածքաբլիթից, լեռները՝ պաղպաղակից: Այնտեղ մարդիկ շա՛տ էին սիրում իրենց մոլորակը: Այնտեղ ես հրաշալի ժամանակ անցկացրեցի, իսկ հետո նստեցի տիեզերանավս և շարունակեցի ճամփորդել: Ես եկա մի մոլորակ, որը նման էր մեր մոլորակին: Այդ մոլորակի անունը Խաղաղ մոլորակ էր: Այնտեղ կային

գեղեցիկ անտառներ, այգիներ, գետեր, լճեր և բարձր լեռներ: Այնտեղ ապրում էին աշխատասեր ու բարի մարդիկ: Նրանք խաղաղասեր մարդիկ էին: Այդ մոլորակում երբեք պատերազմ չէր լինում: Ինձ այդ մոլորակը անչափ դուր եկավ: Սա էլ իմ տիեզերական ու հեքիաթային ճամփորդությունը:

Արարատ Եսայան

Ես Արարատ Եսայանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի հուլիսի 21- ին: Ես սիրում եմ խաղալ ֆուտբոլ: Իմ վերջին կարդացած գիրքը գյուտարար

Նյուտոնի մասին է: Իմ ամենասիրած ֆուտբոլիստը Լիոնել Մեսսին է: Ես ազատ ժամանակ խաղում եմ էլեկտրոնային խաղեր կամ ֆուտբոլ: Երբ մեծանամ ուզում եմ դառանալ հայտնի ֆուտբոլիստ: Ես սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում: Ես ունեմ շատ ընկերներ: Մենք միմյանց հետ շատ ենք խաղում: Ես երբեմն ազատ ժամանակ խաղում եմ իմ շան և կատվի հետ: Ես խնամում եմ իմ կենդանիներին: Ես սիրում եմ հայրիկիս հետ աշխատել նաև մեր այգում:

Եթե դուք ուզում եք իմանալ ավելին իմ մասին այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն https://araratesayan.edublogs.org/:

Ճանապարհորդ ձին

Մի ձիարշավարանում Ծովինար անունով մի ձի է լինում: Մի օր երկու տղա են գալիս ձիարշավարան, որ ձի վարեն: Տղաները սոված էին և անդադար խոսում էին սնունդից: Նրանք երկուսն էլ միակարծիք էին աշխարհի ամենահամով ուտեստի վերաբերյալ:
-Ո՞նց էր անունը այդ ուտեստի, հա՛, հիշեցի,

պիցա։ Նեապոլի պիցայից լավը չկա։
Ծովինարն ամբողջ գիշեր քնել չկարողացավ. նա երազում էր պիցայի մասին՝ առանց իմանալու թե ինչ է դա։ Հաջորդ օրերը նույնպես Ծովինարի մտքին կրկին միայն պիցան էր և նա հասկացավ, որ այլընտրանք չունի, քան գնալ և համտեսել այն Նեապոլում։ Բայց այ քեզ բան, ինչպե՞ս իմանալ, թե որտեղ է այն գտնվում։ Նա հանկարծ հիշեց, որ իրենց նկուղում մի քարտեզ է տեսել ժամանակին։ Գնաց նկուղ և սկսեց փնտրել։ Փնտրեց, փնտրեց և գտավ այդ քարտեզը։
-Ուռա՛, գտա Նեապոլը։
Եվ այդպես Ծովինարը որոշեց մեկնել Նեապոլ։ Նա գնաց տոմսավաճառի մոտ և պարզվեց, որ իրեն տոմսից բացի վիզա է հարկավոր։ Գնաց դեսպանատուն՝ վիզա ստանալու։ Ծովինարը դեսպանատանը ծանոթացավ մի ընձուղտի հետ։ Ընձուղտը երազում էր լսել Իտալական օպերա։ Եվ նրանք իրար հետ մեկնեցին Իտալիա։ Նանք նստեցին ինքնաթիռ և Թուրքիայի վրայով հասան Իտալիա։ Սկզբում գնացին Նեապոլ՝ պիցա ուտելու, իսկ հետո գնացին օպերա լսելու։ Քանի որ նրանց վիզայի ժամկետը չէր լրացել, նրանք որոշեցին

գնալ նաև Վենետիկ։ Վենետիկը մի հրաշք քաղաք է՝ հենց ծովի վրա։ Վենետիկում մեքենաների փոխարեն նավակներ են, իսկ փողոցների փոխարեն՝ ջուր։ Շրջագայությունը նրանց դարձրեց մտերիմ ընկերներ և նրանք որոշեցին ճանապարհորդել աշխարհով մեկ։

Գաբրիել Մովսեսյան

Ես Գաբրիել Մովսեսյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի ապրիլի 25-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Հանճար» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում խաղեր խաղալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել: Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ ճարտարապետ: Ես ազատ ժամանակ կարդում եմ, լինում է նաև, որ կիսատ դասերս եմ ավարտում, տատիկիս բակում իմ ընկերների հետ խաղում եմ: Նաև համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ մեծ սեփական տուն, մոտոցիկլետ և ամենագնաց մեքենա «Tesla model X»: Սիրում եմ ճամփորդել, սիրում եմ հայտնաբերել նոր ինֆորմացիա, որը ես չգիտեի: Ես կարդացել եմ 8-9 գիրք: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ համակարգչային խաղեր, բակային խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք https://gabrielmovsesyan.edublogs.org/:

Շոկոլադե աշխարհը

Կար-չկար մի նապաստակ: Այդ նապաստակն ապրում էր մի փոքրիկ մոլորակի վրա: Այդ մոլորակը առանձնահատուկ էր նրանով, որ այն շոկոլադե էր: Նապաստակի մոլորակի վրա աճում էին բառբաբներ, քանի որ նրա մոլորակում կային բառբաբի սերմեր: Նա ամեն օր առավոտյան արթնանում է, լվացվում է, թեյ է ըմպում և գնում է բառբաբի սերմերը հանելու: Մի օր նա հայտնաբերում է մի երկար ճանապարհ և որոշում է գնալ և տեսնել, թէ ինչ է սպասվում այդ ճանապարհի վերջում: Նա ի սկզբանե պատրաստում է իր իրերը և բոլոր բառբաբի սերմերը, որոնք կարող են աճել, հեռացնում է հողից և գնում է ճամփորդության: Այնտեղ նա հանդիպում է մի քանի հեշտ փորձերի, եթե նա այդ փորձերն անցնի, նա կընկնի մի ուրի շոկոլադե գունագեղ աշխարհ: Նա իհարկե շատ արագ անցավ այդ փորձերը և ընկավ այդ աշխարհ: Այնտեղ նա իր նոր մեծ տունը կառուցեց

և ապրեց այդ աշխարհում։ Այդ աշխարհում բոլոր մարդիկ և կենդանիները շատ բարի էին, որսորդներ չկային, իսկ գիշատիչ կենդանիներն այլևս վնաս չէին տալիս։ Այնտեղ նա գտավ մի գեղեցիկ նապաստակ թագուհու և որոշեց ամուսնանալ նրա հետ։ Նա գնաց պալատ և միանգամից նրանք սիրահարվեցին։ Մի քանի օր անց նրանք ամուսնացան և ապրեցին իրենց կյանքը հաշտ ու համերաշխ, կարծես՝ շոկոլադի մեջ։ Եվ նապաստակը շատ ուրախ էր, որ հայտնվել է շոկոլադե մոլորակում։

Արեգ Դայան

Ես Արեգ Դայանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Իմ առաջին ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ» գիրքն է: Ես սիրում եմ գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ ծրագրավորող: Ես ազատ ժամանակ թղթից նավ, կամ տանկ եմ

պատրաստում, լինում է նաև, որ կիսատ դասերս եմ ավարտում, մայրիկիս և հայրիկիս համար սուրճ եմ պատրաստում, մի քիչ համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ շա՛տ ուժեղ համակարգիչ և հեռախոս: Սիրում եմ ճամփորդել: Ես կարդացել եմ շատ գրքեր: Ես ունեմ քիչ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ բոնոցի, պախկվոցի, և գետնից բարձր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Ճանապարհորդություն դեպի լուսին



Մի օր ես ու ընկերներս որոշեցինք մեկնել դեպի Ամերիկա, բայց ընկերներիցս մեկն ասաց. «ավելի լավ է թռչենք դեպի Լուսին»: Մենք հաջորդ օրը եկանք տիեզերանավի մոտ և բարձրացանք տիեզերանավը: Հաջորդ օրը մենք տիեզերանավից նայեցինք և տեսանք ուրիշ աշխարհներ: Տիեզերանավի պահարանների մեջ գտանք ուտելիք: Մենք հաջորդ օրը հեռվից հեռու տեսանք Մարսը, իսկ հաջորդ օրը տեսանք

լուսինը: Մեզ թվում էր, թե արդեն մի քիչ է մնացել, բայց մենք թռչում էինք ու թռչում: Մի օր վերջապես հասանք լուսին: Լուսնի վրա կարծես թռչող սարք լինեի: Թռնելուց ավելի բարձր էի թռնում, քան երկիր մոլորակի վրա: Լուսնի վրա նույնիսկ հին արբանյակ գտանք:
Ընկերներից մեկմ ասաց, թե պետք է պատրաստվենք, որ մտնենք անցքի մեջ: Մենք պատրաստվեցինք և մտանք անցքերից մեկի մեջ: Այդ անցքը մեծ էր: Մտանք և տեսանք այնտեղ մի քանի կենդանի: Կենդանիներից մեկը երեք աչք ուներ: Հաջորդ օրը լուսնի վրա գտանք այն, ինչ որ ոչ ոք դեռ չէր գտել՝ ուտելու մի բան, իսկ հաջորդ օրը տարօրինակ ջուր գտանք: Մենք լուսնի վրա ուրախ էինք, իսկ օդը մեզ հետ շատ էինք վերցրել: Իմ ընկերներից մեկն ասաց. «Եկեք տուն պատրաստենք»: Ես ասացի՝ անհնար է, իսկ հետո նա մտածեց, և ասաց՝ հնարավոր է: Ես հարցրեցի. «Ո՞նց պետք է պատրաստենք, եթե քար չկա»: «Քար չկա, անցքի մեջ կպատրաստենք»: Եվ ես համաձայնեցի: Մենք մի կերպ տուն պատրաստեցինք: Հաջորդ օրն ամբողջ լուսնի վրա ման եկանք մարդ, բայց չգտանք: Հաջորդ օրն էլի չգտանք: Դրա հաջորդ օրն էլ չգտանք, և մի քանի օր հետո մենք վերջապես մարդ գտանք, բայց տարբերվում էր: Մենք այդ մարդուն հարցրեցինք լուսնի վրա էլի մարդիկ կա՞ն, թե՞ չէ և նա պատասխանեց, որ էլի կան: Եվ մենք գնացինք

մարդկանց մոտ և ընկերացանք նրանց հետ: Մարդիկ մեզ տվեցին իրենց ուտելիքից, մենք կերանք և գնացինք տուն: Լուսնի վրա հավես էր: Մենք տիեզերանավի մոտ էլ չէինք գնում, և մի օր մենք մոռացանք թե, որտեղ էր այդ տիեզերանավը: Մենք շատ ման եկանք: Օրերը դարձան շաբաթներ, իսկ մենք էլի չէինք գտնում: Մենք ման էինք գալիս ման էինք գալիս, բայց չգտանք: Հաջորդ օրը մենք էլի ման եկանք, բայց չգտանք: Հետո էլի ման եկանք, և վերջապես գտանք: Մենք նստեցինք տիեզերանավի մեջ, և թռանք դեպի երկիր մոլորակ: Մենք ճանապարհին որոշեցինք դասարանցիներին պատմել, թե ինչպես թռանք լուսին: Իմ ընկերներից մեկն ասաց.

- Չե՞ք ուզի թռչել մարս:
  Ես ասացի.
  -Այո :

Հանկարծ ես արթնացա, և հոգոցով մտածեցի՝ ափսոս, որ երազ էր, ինչ հրաշալի երազ էի տեսել:



Մարկ Թոփալյան

Բարև ձեզ: Ես Մարկ Թոփալյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի մայիսի 5-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3.1 դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Ճանապարհորդ Ջեկոն» գիրքն է: Ես շատ եմ սիրում համակարգչով խաղեր խաղալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել, ֆուտբոլ խաղալ: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ ձյուդոյիստ և ֆուտբոլիստ: Ես ազատ ժամանակ ավարտում եմ իմ դասերը և իջնում դուրս: Ես ուզում եմ ունենալ ուժեղ հեռախոս: Սիրում եմ ճամփորդել, ժամանակ անցկացնել ընկերներիս

հետ խաղալ և այլն… Ես սիրում եմ կարդալ փոքրիկ պատմվածքներ։ Ես ունեմ 10 ընկերներ։ Ես ամեն օր նրանց հետ խաղում եմ ֆուտբոլ և գոլից գոլ։ Ես շատ եմ սիրում խաղալ իմ ընկերների հետ։
Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ։ Ահա իմ բլոգի հասցեն՝ https://marktopalyan.edublogs.org/

Այլմոլորակայինի արկածները

Մի օր, չգիտեմ որտեղից, մեր քաղաքում հայտնվում է մի փոքրիկ այլմոլորակային, որի անունն էր Ջոն։ Նա շատ տարօրինակ արտաքին ուներ։ Ուներ մեկ աչք, ոտքերի տեղը ձեռքեր, ձեռքերի տեղը՝ ոտքեր։ Բոլոր բալիկները վախենում էին նրանից։ Երբ նա փորձում էր երեխաներից մեկի հետ խաղալ, նրա վրա բղավում էին և փախչում։ Նա միշտ մենակ էր և տխուր։ Մի օր քաղաքում դեպք է պատահում։ Կենդանաբանական այգուց փախչում է այգու վագրը։ Բոլոր երեխաները սարսափած փախչում էին։ Միայն Ջոնն էր, որ խիզախություն ունեցավ մոտենալ վագրին և շոյել նրան։ Վագրը զգաց, որ բալիկներից իրեն վտանգ չի սպառնում, հանգստացավ և խաղաղվեց։ Այդ օրվանից վագրը, փոքրիկ Ջոնը և քաղաքի բոլոր բալիկները ապրում էին հաշտ և համերաշխ։

Լուսե Դերդերյան

Ես Լուսե Դերդերյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի հուլիսի 16-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ պարել, հեծանիվ վարել և խաղալ քույրիկիս հետ: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ նկարչուհի: Ես ազատ ժամանակ կարդում եմ, լինում է նաև, որ կիսատ դասերս եմ

ավարտում և օգնում եմ տատիկիս, մի քիչ համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ շա՛տ ուժեղ համակարգիչ և հեռախոս: Սիրում եմ ճամփորդել, սիրում եմ հայտնաբերել նոր տեղեկություն, որը ես չգիտեի: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ համակարգչային ուսուցողական խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://lusederderian.edublogs.org

Ծիածանի ճամփորդությունը

Մի օր երկնքում արթնացա և հասկացա, որ դարձել եմ ծիածան: Ես ունեի յոթ գույն՝ կարմիր,

նարնջագույն, դեղին, կանաչ, կապույտ, մուգ կապույտ և մանուշակագույն։ Ինձ հանդիպեց մի թիթեռ, և նա ասաց.
— Ծիածա՛ն, ինչ գեղեցիկ ես դու։ Ուզում ես ինձ հետ քաղաքից դուրս գնալ։ Մենք կարող ենք գնալ Գյումրի։
— Արի գնանք։ Ես շատ եմ սիրում ճամփորդել։ Բայց մենք ինչո՞վ գնանք։
— Դու կարող ես քո գունավոր թևերով իմ հետևից գալ, իսկ ես իմ փոքրիկ թևերով կգնամ։
Գնացին, գնացին խոսող սարերի հանդիպեցին։ Սարերը ծիածանին ասացին.
— Ծիածան, ինչպե՞ս ես դու հայտնվում երկնքում։
— Շատ հետաքրքրիր հարց էր, հիմա բացատրեմ։ Երբ անձրև է գալիս, ես շատ քիչ եմ երևում, իսկ հենց որ արևը երևում է երկնքում, ես ավելի վառ եմ երևում։
Նորից ճանապարհը շարունակեցին։ Ճանապարհի կեսին ծառեր կային, որոնք օրորվում էին մեղմ քամուց։ Նրանք տեսան, թե ինչպես են ծառերն իրենց բարևում և ժպտում։ Շուտով նրանք հասան։ Ծիածանն ասաց.
— Ինչ գեղեցիկ է այստեղ, բայց մի քիչ ցուրտ է։ Ի՞նչ անենք թիթեռ։
— Արի, մի քիչ տաք հագնվենք և գնանք երեխաների հետ ծանոթանանք։
Ծիածանը մի երեխա տեսավ և հարցրեց.
— Ի՞նչ է քո անունը։

— Իմ անունը Շուշան է։ Իսկ քո անունն ի՞նչ է։
— Իմ անունը Ծիածան է։
— Դու շատ գեղեցիկ գույներ ունես։
— Շատ շնորհակալություն։ Ես հիմա կգնամ Գյումրիում կզբոսնեմ։ Ցտեսություն, Շուշան։
— Ցտեսություն։
Ծիածանը և թիթեռը գնացին մի եկեղեցու մոտ։ Այդ եկեղեցու անունը Սուրբ Յոթ Վերք է։ Հետո գնացին Գյումրիի այգիներից մեկը և ուրախացրեցին մարդկանց։ Վերջում նրանք իրենց թևերով թռան Երևան։

Ալեքս Բաղալյան

Ես Ալեքս Բաղալյանն եմ։ Ծնվել եմ 2014 թվականին ապրիլի 4-ին՝ քաղաք Երևանում։ Ես

Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3.1 դասարանում: Իմ սիրած հեքիաթը «Սուտասանը» հեքիաթն է: Ես սիրում եմ կարդալ, նկարել, մոլորակներ և ուսումնասիրել տարածություններ: Ուզում եմ դառնալ երգիչ: Ես ազատ ժամանակ կարդում եմ, նկարում եմ և խաղում եմ քույրիկիս և եղբորս հետ:

Մի օր դարձա գյուտարար

Ես Ալեքս Բադալյանն եմ: Հայտնի եմ, որպես գիտնական եմ: Եվ ես այսօր պատրաստելու եմ գյուտ, որով կօգնեմ իմ մոլորակի տխուր մարդուն: Ես շատ բաներ եմ հորինել: Օրինակ՝ կոշիկներ, որոնք երբեք չեն մաշվում և նրանցով ավելի արագ կվազես: Այդ կոշիկները մարդուն թողնում են, որ նա ավելի բարձր թռչի օդ: Այդ մարդու համար ես կստեղծեմ մի կախարդական փայտիկ, որ նրա բոլոր երազանքները կատարվեն: Նաև

կպատրաստեմ մի ծառ, որից ամեն օր գումար է ընկնում:

Լուսինե Վարդանյան

Ես Լուսինե Վարդանյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի մարտի 7-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Ամեն ինչ տանիքի Կառլսոնի

մասին» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել, բոլորին օգնել: Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ բժիշկ: Ես ազատ ժամանակ կարդում եմ, տատիկիս հետ խմորեղեն եմ պատրաստում, օգնում մայրիկիս տունը մաքրելիս: Հաճախ համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ շա՛տ հզոր համակարգիչ և հեռախոս: Սիրում եմ ճամփորդել, սիրում եմ հայտնաբերել նոր ինֆորմացիա, որը ես չգիտեի: Ես կարդացել եմ չորս գիրք, այժմ կարդում եմ «Ճագարի մասին» պատմվածքը:

Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ հումորային խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://lusinevardanyan.edublogs.org/

Կախարդական ծառը

Այդ պատմությունը սկսվել էր 1985 թվականին: Մի օր մայրիկն ու իր որդին գնացին այգի, որ ծառեր տնկեն: Այնտեղ շատ մարդիկ կային և նրանք իրենց համար մի լավ միջավայր ստեղծեցին: Նրանք սկսեցին տնկել ծառերը: Որդին ասաց.

-Մայրիկ, իսկ ծառը կարո՞ղ է իսկական դառնալ.

-Որդիս, ծառը չի կարող իսկական լինել.

Որդին շատ տխրեց, որովհետև նա ոչ մի ընկեր չուներ: Եվ ամեն տարի նրանք գալիս ու ջրում էին: Որդին մեծանում էր ծառի հետ: Մի օր նրանք նորից եկան ծառը ջրելու և որդին տեսավ, որ ծառը շատ ավելի արագ էր մեծանում քան մույս ծառերը և նա որոշեց երեկոյան մնալ ու տեսնել, թե ինչ է կատարվում ծառի հետ: Նա եկավ և տեսավ, որ իր ծառը սկսում է շարժվել և նա սկսեց խոսել,

պատմել ուրիշ ծառերին՝ ինչ է կատարվում։ Նա հարցրեց ծառերին.

-Իսկ ի՞նչ պետք է անել, որ ես դառնամ իսկական.

-Դու պետք է ոչ մի բան չանես, այլ պետք է, որ նրան մարդը շատ-շատ սիրի։

-Լավ,-ասաց ծառը,-դե ես երբեք չեմ դառնա իսկական.

Տղան քիչ էր մնում լաց լիներ, բայց պահեց իրեն և նա այդ օրվանից սկսեց իրեն շատ-շատ սիրել։ Նա եկավ և գրկեց ծառին։ Ծառը սկսեց իրեն զգալ իսկական։ Բայց տղան ուզում էր մայրիկին պատմել ծառի մասին։ Հաջորդ օրը, երբ մայրիկը եկավ ծառը ջրելու, նա տեսավ, որ ծառը իսկական է։ Մայրիկը ապշած էր և ուրախ։ Եվ այդպես ծառը դարձավ իսկական։

Մարիկա Վարդանյան

Ես Մարիկա Վարդանյան եմ: Ծնվել եմ 2014 թվականի Մարտի 5-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Գաղտնի Բանաձևն» է: Ես սիրում եմ խաղալ, նկարել և սպորտով զբաղվել:Ես սովորում եմ բալետի քոլեջում և երգում եմ «Արևիկ» անսամբլում: Ես ազատ ժամանակ պարում եմ և կարդում: Երբ ես մեծանամ, ուզում եմ դառնալ բալետի պարուհի և հայտնի երգչուհի: Ես նաև վարում եմ մանկական հաղորդումներ: Ես սիրում

եմ ճամփորդել տարբեր երկրներում: Նաև շատ եմ սիրում ընկերներիս հետ ժամանակ անցկացնել:

Եթե ուզում եք իմ մասին ավելի շատ իմանալ սա իմ բլոգի հղումն է
https://marikavardanyan.edublogs.org/

Կախարդական պուանտներ



Աշխարհի ամենալավ քաղաքում ապրում էր մի աղջիկ՝ Մարիկան, նա 7 տարեկան էր: Փոքրիկ աղջիկը սիրում էր տարբեր խաղեր, բայց ամենից շատ սիրում էր պարել: Լսելով երաժշտությունը՝ նա սկսում էր պտտվել, ցատկել, սահուն շարժել ձեռքերը:

Երբ ծնողների մոտ հյուրեր էին գալիս, Մարիկան միշտ պարում էր նրանց առջև: Մեծահասակները սիրում էին նրան և գովում :

Մարիկան որոշեց, որ պետք է դառնա բալետի պարուհի և մի օր նա այդ մասին հայտնեց մայրիկին։

-Մայրիկ, ես երազում եմ դառնալ բալետի պարուհի:

Մայրիկը պատասխանեց, – բալետում հաջողության հասնելու համար պետք է շատ պարապել և փորձեր անել:

-Ես շատ կփորձեմ, ինձ տար բալետի դպրոց,- խնդրանքով մայրիկին դիմեց Մարիկան։

Ծնողները մտածեցին, խորհրդակցեցին և դստերը տարան բալետի դպրոց: Մարիկային ստուգեցին պարի մասնագետները: Նա փորձեց ցատկել, բարձր, պարել դանդաղ, իսկ հետո արագ երաժշտության ներքո: Ուսուցչուհին ասաց, - աղջիկը լավ, բնատուր շնորհ ունի, բայց պետք է այն զարգացնել, գլխավորը նրա ցանկությունն է, աշխատասիրությունն ու հաստատակամությունը: Պարի դպրոցում ամեն ինչ այլ էր: Աղջիկը միշտ չէ, որ հետևում էր երաժշտությանը, շփոթում էր շարժումները: Երբեմն Մարիկան այնպես էր հոգնում, որ ուզում էր թողնել ամեն ինչ: Բայց հետո հիշում էր իր նվիրական երազանքի մասին և նորից գնում էր փորձերի: Աստիճանաբար նրա կեցվածքը փոխվեց,

քայլվածքը դարձավ թեթև: Այժմ Մարիկան արագ հիշում էր շարժումները, պարում էր գեղեցիկ ու անսխալ: Երբ նա դարձավ 9 տարեկան, մայրիկը նրան նվիրեց վարդագույն պուանտներ և ասաց,- երբեք մի՛ հանձնվիր: Եթե ցանկանում ես լավ պարել, պատրաստ եղիր հաղթահարել հոգնածությունը և ձախողումը: Իսկ այս վարդագույն պուանտները թող լինեն քեզ համար թալիսման: Շուտով ամենամյա մանկական պարի մրցույթին Մարիկան նույնպես պետք է մասնակցություն ունենար: Պարը դժվար էր, աղջիկը շատ էր փորձում: Խիստ պարուսույցը ճշգրտություն էր պահանջում, զայրանում էր սխալների համար: Մրցույթին քիչ ժամանակ էր մնացել: Մարիկան վախենում էր, որ կհուսահատեցնի բոլորին: Սակայն, երբ հագավ իր վարդագույն պուանտները, հիշեց մոր խոսքերը և վախն ու անհանգստությունն աստիճանաբար անհետացան:

Մրցույթը հաջող անցավ: Մարիկան իր տարիքի երեխաների մեջ գրավեց 1–ին տեղը, բայց նա ամենևին էլ չզոռոզացավ ,այլ շարունակում է պարել սովորել, որ մի օր դառնա՝ հայտնի պարուհի:

Մհեր Հովհաննիսյան

Իմ անունը Մհեր է: Ես ութ տարեկան եմ: Սովորում եմ Արևմտյան դպրոցի 3.1 դասարանում: Ես սիրում եմ ֆուտբոլ խաղալ: Ես հետաքրքրվում եմ ֆուտբոլիստներով: Ազատ ժամանակ սիրում եմ լսել ու երգել տարբեր ռոք խմբերի երգեր: Նաև սիրում եմ նկարել:

Կենդանիները թարս աշխարհում

Լինում է չի լինում մի հովիվ։ Այդ հովիվը մի ձի էր պահում։ Նա որոշեց ման տալ ձիուն։ Բայց երբ հովիվը ձիուն ման էր տալիս, նա տեսավ մի ուրիշ հովվի, որն էշ էր ման տալիս։

- Բարև, եղբայր։
- Բարով ես եկել։
- Ձի՞ ես ման տալիս։
- Այո, ինչու՞։
- Միգուցե ընկերներ դառնաք, մեկը՝ ձիով, մեկը՝ էշով։
- Ինչու ոչ։
- Կարող եմ մերոնց մոտ տանել քեզ, մի հրաշալի սուրճ հյուրասիրել։

Նա համաձայնվեց և գնացին։ Հովիվը շատ հավանեց։

- Շատ լավն էր սուրճը, շատ շնորհակալ եմ առարջարկի համար։
- Հա, դե լավ է։

Եվ նրանք էլի քայլեցին և տեսան երկու հովիվ, որ իրար հետ ընկեր էին։

Մեկը գառ էր ման տալիս, մեկը՝ այծ։

- Բարով եկաք, ընկերներ։
- Դուք էլ բարով եկաք։
- Միգուցե ընկերանա՞նք։

- Ինչու՞ ոչ:

Ընկերացան, նստարանի վրա նստեցին և շաուրնակեցին զրուցել: Այդ ընթացքում կենդանիները փախան: Կենդանիները մոլորվել էին: Նրանք քնեցին և արթնացան Թարս աշխարհում: Ամենը ինչ-որ կար, արդեն թարս էր և նրանք էլ չեն կարող տեսնել թե ուր էին իրենց տերերը: Նրանք մի կախարդական քար տեսան և այդ քարի օգնությամբ հետ վերադարձան իրական աշխարհ:

Ռուբեն Հովսեփյան

Ես Ռուբեն Հովսեփյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի փետրվարի 18 ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Ես սիրում լողալ, ֆուտբոլ խաղալ և դաշնամուր նվագել: Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ երաժիշտ, ֆուտբոլիստ կամ աշխատակազմի ղեկավար: Ես ազատ ժամանակ նվագում եմ, մի քիչ համակարգչային խաղեր եմ խաղում: Սիրում եմ ճամփորդել, սիրում եմ պաղպաղակ ուտել և ամենակարեւորը շա՛տ-շա՛տ եմ սիրում խաղալ փլեյսթեյշընն 5:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://rubenhovsepyan.edublogs.org/

Լոլիկն ու վարունգը

Լինում են, չեն լինում մի լոլիկ, վարունգ, ֆերմեր ու խոհարար։ Մի օր ֆերմերն արթնացնում է լոլիկին ու ասում.

— Ա՛յ լոլիկ, չե՞ս արթնանում։

— Հա, հիմա, հիմա։

Լոլիկը շարնակում է քնել, իսկ ֆերմերը բարկանում է և ասում, որ արդեն պետք է քաղի լոլիկին ու տանի խոհարարի մոտ, որպեսզի նա ճաշի մեջ տոմատ ավելացնի։ Լոլիկին քաղում է ու տանում խոհարարի մոտ։ Մինչև խոհարարը սրում է իր դանակը, լոլիկը անզգուշորեն ընկնում է ճաշի մեջ, ճզվմվում ու դառնում տոմատ։ Դրանից հետո արագ արթնանում է վարունգը։ Ինքնուրույն լվացվում, ու գնում խորհուրդներ տալիս խոհարարին։ Խոհարարը առանց վարունգի աղցան էր պատրաստել։ Վարունգն ասում է.

— Ա՛յ խոհարար, ինչո՞ւ ես առանց ինձ աղցան պատրաստում, ի՞նչ է, դու չգիտես, որ իմ 90%-ը ջուր է, դրա համար էլ ես օգտակար եմ մարդու համար։ Ինձ կտրիր ու լցրու աղցանի մեջ, համ դու կլինես առողջ, համ էլ՝ մարդիկ։

Այսպես իմաստավորվում է լոլիկի և վարունգի կյանքը։

Մանե Պողոսյան

Ես Մանե Պողոսյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի հունիսի 25-ին Երևանում: Սովորում եմ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի Արևմտյան Դպրոց-պարտեզում: Իմ վերջին կարդացած գիրքը «Երաժիշտ հրեշ»-ն է, ես շատ եմ սիրում այդ գիրքը կարդալ: Սիրում եմ նկարել, տիկնիկագործությամբ զբաղվել և ծեփամածիկով տարբեր կենդանիներ և առարկաներ քանդակել:

Երբ մեծանամ շատ եմ ուզում դառնալ նկարչուհի։ Դպրոցից բացի հաճախում եմ անգլերենի և շախմատի դասընթացների: Հետաքրքրված եմ կենդանական աշխարհով, հաճույքով դիտում եմ հաղորդումներ, որտեղ կենդանիների մասին են պատմում : Ես ունեմ շատ ընկերուհիներ, շատ եմ սիրում իմ դպրոցը, քանի որ դասերը շատ հրտաքրքիր են անցնում: Հաճախ գնում ենք ճանապարհորդությունների, ագարակ, կատարում ենք բնագիտական փորձեր և այցելում ենք տարբեր թանգարաններ և թատրոններ :

Երազել սիրող աղջիկը

Լինում է չի լինում, մի աղջնակ է լինում, անունը՝ Անուկա: Նա շատ էր սիրում երազել և

կենդանիների հետ ընկերություն անել: Մի օր նա որոշում է գտնել այն հեքիաթային մոլորակը, որտեղ բոլորը հասկանում են կենդանիների լեզուն: Վաղ առավոտյան նա վերցնում է իր իրերը և ճամփա է ընկնում: Երկար քայլում է և հասնում է մի տարօրինակ ծառուղու, որտեղ յուրաքանչյուր ծառ իր գույնն ուներ: Անուկան որոշում է, որ հենց այդ ճանապարհը կտանի իրեն դեպի իր երազանքի մոլորակը: Ծառուղով քայլելիս Անուկան լսում է մի գեղեցիկ ձայն, ինչ-որ մեկը կամաց երգում էր: Անուկան ուշադիր նայում է շուրջբոլորը, սակայն ոչ մեկի չի տեսնում: Երբ ավելի ուշադիր է փնտրում, հասկանում է, որ մի փոքրիկ թիթեռնիկ է երգում: Անուկան հասկանում է, որ հասել է հրաշալի մոլորակին և արդեն կարողանում է հասկանալ կենդանիներին: Անուկան հեռվում նկատում է մեծ քար, մոտենում է և հասկանում է, որ դա ոչ թե քար է, այլ մեծ, շատ մեծ կրիա: Կրիան պատմում է, որ ինքն օվկիանոսային կրիա է և արդեն 55 տարեկան է: Պատմում է, որ իրենք շատ երկար են ապրում և որ նա ունի մեծ ընտանիք: Կրիան Անուկային առաջարկում է շրջել օվկիանոսում: Ճանապարհին նրանք հանդիպում են մեծ և գունավոր մեդուզայի և շատ մեծ կետի, սակայն նրանց հետ չի հաջողվում զրուցել, քանի որ նրանք շատ հեռու էին:
Անուկան որոշում է այցելել նաև ցամաքային

կենդանիներին: Ճանապարհին տեսնում է Ռնգեղջյուրի: Ռնգեղջյուրը պատմում է, որ իրենք սիրում են քնել օրվա շոգ ժամերին և նախընտրում են զբոսնել գիշերային ժամերին: Նրանք շատ լավ հոտառություն և լսողություն ունեն, սակայն ցավոք շատ վատ են տեսնում:
Ճանապարհին Անուկան հանդիպում է վագրակատվի, որը համաձայնվում է տանել Անուկային մի գեղեցիկ դաշտ, որտեղ շատ ծաղիկներ կան:
Վագրակատուն պատմում է, որ իրենք կարողանում են վազել մինչև 112 կմ/ժ արագությամբ և համարվում են ամենաարագավազ կենդանին: Չնայած նրան, որ վագրակատուները շատ արագավազ են, համարվում են շատ թույլ կենդանիներ և եթե չեն հասցնում շուտ փախչել, կարող են դառնալ առյուծի կամ այլ ուժեղ կենդանու զոհ:
Մինչ նրանք զրուցում էին, վերևում մի փոքրիկ թռչուն էր նկատվում, որն աստիճանաբար մոտենում էր: Երբ արդեն շատ մոտեցավ, Անուկան հասկացավ, որ դա ոչ թե փոքրիկ թռչուն է, այլ մի մեծ արծիվ:
Արծիվը որոշում է Անուկային ցույց տալ իրենց մոլորակը վերևից: Արծիվը պատմում է, որ ճախրելու ընթացքում իրենք շարժվում են մոտ 200– 350 կմ / ժամ արագությամբ, դանդաղ են թվում թռիչքի բարձրության պատճառով,

բարձրանում եմ մինչև 9 կմ: Միևնույն ժամանակ, նրանք հիանալի տեսնում են այն ամենը, ինչ տեղի է ունենում գետնին և կարող են միաժամանակ կենտրոնացնել իրենց տեսողությունը երկու օբյեկտի վրա: Լրացուցիչ թափանցիկ կոպը պաշտպանում է արծիվների աչքերը ուժեղ քամուց և արևի լույսից:
Երբ Անուկան արծվի հետ միասին հիանում էին բնության գեղեցկությամբ, հեռվից լսեց մի շատ ծանոթ ձայն, որը կանչում էր իր անունը: Երբ ձայնը մոտեցավ, Անուկան հասկացավ , որ դա իր մայրիկի ձայնն է: Մայրը փորձում էր արթնացնել Անուկային :
Անուկան վեր թռավ քնից և հասկացավ, որ այս ամենը երազ էր և ինքը գտնվում է իր սենյակում և արդեն դպրոց գնալու ժամանակն էր:

Արևիկ Թադևոսյան

Ես Արևիկ Թադևոսյանն եմ, ծնվել եմ Երևանում 2013 թ. դեկտեմբերի 14-ին: Սովորում եմ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3.1 դասարանում: Շատ եմ սիրում իմ դպրոցն ու դասարանը, առարկաներից ամենաշատ սիրում

եմ մաթեմատիկան, մայրենին և ռուսերենը: Ես հաճախում եմ շախմատի, ունեմ շախմատային 4-րդ կարգ: Ես շատ եմ սիրում շախմատ, բավական շատ ժամանակ եմ տրամադրում պարապմունքներին, մասնակցում եմ տարբեր մրցաշարերի և առաջնությունների, հիմնականում եմ վաստակում եմ բարձր միավորներ: Ես շատ եմ սիրում ճամփորդել: Մենք և դպրոցում ենք հաճախ ճամփորդության գնում, և մեր ընտանիքով ենք անընդհատ ճամփորդում Հայաստանի ամբողջ տարածքով: Ես բազմաթիվ գեղեցիկ վայրերում եմ եղել, բայց դեռ տեսնելու շատ հետաքրքիր վայրեր կան:

Ես շատ եմ սիրում ընկերներիս հետ խաղալ և շատ ընկերներ ունեմ: Սիրում եմ անընդհատ նոր մարդկանց հետ ծանոթանալ: Շատ եմ սիրում նաև ֆիլմեր դիտել: Ընտանիքով սովորաբեր երեկոյան հետաքրքիր կինոնկար ենք դիտում:

Ես նաև ունեմ իմ անձնական բլոգը, իմ մասին կարող եք կարդալ նաև այնտեղ. ահա հասցեն՝ https://areviktadevosyan.edublogs.org/:

Կախարդական ճանապարհ

Ես մի անգամ որոշեցի ճանապարհորդել դեպի Ամերիկա: Ես գնացի, գնացի և հասա Վրաստան: Վրաստանում բոլորը թռչում էին երկնքում, և նրանք նաև կարողանում էին մարդկանց մտքերը կարդալ:Եվ ես նորից ճանապարհ ընկա: Ես հասա Ռուսաստան: Ռուսաստանում բոլորը ամպերի վրա կարողանում էին քայլել և կարող էին ամպերից պատկերներ սարքել: Ես շարունակեցի ճանապարհը: Գնացի, գնացի և հասա Ֆինլանդիա: Ֆինլանդիայում բոլորը կարողանում էին կայծակները ձեռքով բռնել ու իրենց տան վառարանը վառել: Հետո ես գնացի, գնացի և հասա Շվեդիա: Շվեդիայում բոլորը կարողանում էին իրենց աչքերով իրերը տեղաշարժել: Դա էլ տեսնելուց հետո գնացի և հասա Նորվեգիա: Նորվեգիայում բոլորը կարողանում էին մեկ րոպեում երկու հարյուր կիլոմետր թռչել և հասնել իրենց ուզած տեղը: Ես շարունակեցի ճամփորդել և հասա Իսլանդիա: Իսլանդիայում տեսա, որ մարդիկ կարողանում էին թռչունների վրա նստած թռչել ու հասնել արեգակին: Իսլանդիայից դուրս եկա և օվկիանոսը լողալով վերջապես հասա Ամերիկա: Իսկ Ամերիկայում տեսա, որ այդ ամենը մարդիկ վաղուց էին կարողանում անել:

Ռաֆայել Գևորգյան

Ես Ռաֆայել Գևորգյան եմ ։Ծնվել եմ 2014 թվականին փետրվարի 6-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Ունեմ բավականին շատ նախասիրություններ: Ազատ ժամանակ սիրում եմ զբաղվել ընթերցանությամբ: Վերջին գիրքը, որը կարդացել եմ Հովհաննես Թումանյանի «Կոնատ

աղջիկը»։ Ունեմ խաղային նախասիրություններ հովերբորդ վարել։ Բացի խաղերից և ընթերցանությունից ունեմ այլ երգանքներ, որից մեկն էլ իրականություն դարձավ՝ հայտնվեցի բաց ծովում,սուզվելով ծովի հատակը, ականատես եղա ջրային աշխարհի հրաշալիքներին՝իրենց բազմերանգ, խայտաբղետ երանգներով։ Դեռ փոքր եմ սակայն երազանք ունեմ հայրենիքս տեսնել խաղաղ օրերով լեցուն։ Ինչպես ամեն մի հայ տղամարդ, ես նույնպես պետք է ծառայեմ հայոց բանակում և լինեմ պիտանի մարդ իմ հայրենիքին, ընտանիքի համար։

-Ես գիտեմ, եթե շատ ես երազում ինչ-որ բանի մասին այն անպայման կիրականանա, միայն թե հավատալ է պետք և դու կհասնես քո երազանքին…

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ։ Ահա իմ բլոգի հասցեն՝ https://rafayelgevorgyan123.edublogs.org/

Ծիածանի ճամփորդությունը

Կար չկար մի հետաքրքրասեր ու չարաճճի տղա կար։Նրա անունը Բեն էր։ Նա ուզում էր ամեն ինչի մասին իմանալ, և անսահման հարցեր էր տալիս։ Բենին հենաքրքրում էին անձրևը, ծիածանը, ամպերը և այլ բնության երևույթներ։

Մի անգամ նա որոշում է ճամփորդություն կատարել դեպի ծիածան։ Բենը մտածում էր, որ ծիածանը կտա իր բոլորր հարցերի պատասխանները։

Ճանապարհին Բենը հանդիպում է մի աղջկա, ով ընկերանում է նրա հետ, և միասին շարունակում են ճանապարհը։

Ծիածանը, որ այս ամենին գաղտնի հետևում էր, ցանկացավ օգնել հետաքրքրասեր երեխաներին։

Նա իր կախարդական փայտիկով մի գույնզգույն կամուրջ գցեց, և երեխաները ուրախ բարձրացան։

Ծիածանի թևին նստած նրանք շրջագայեցին, տեսան շատ երկրներ, լսեցին շատ պատմություններ և ծանոթացան շատ մարդկանց հետ։ Երբ վերադարձան, հասկացան, որ հայրենի երկրից լավ տեղ աշխարհի ոչ մի անկյունում չկա։

Ծիածանը իր ճամփորդությունը համարեց ավարտված, որովհետև երեխաները գտան իրենց հարցերի պատասխանները։

Բենը այս մասին պատմեց ծնողներին և ընկերներին։

Հեքիաթը մեզ սովորեցրեց լինել հայրենասեր, սիրել մարդկանց և հավատալ երազանքներին։

Էդգար Աբգարյան

Ես Էդգար Աբգարյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի օգստոսի 30-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Դոնալդ Բիսսեթին հեքիաթներ» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել, կարատե պարապել: Երբ մեծանամ, ուզում եմ

դառնալ դատավոր, կարատեիստ և խոհարար: Ես ազատ ժամանակ խաղում եմ բակի ընկերների հետ և դիտում ֆիլմ կամ խաղում համակարգչային խաղեր: Երբեմն օգնում եմ մայրիկիս գնումներ կատարել:

Ամենաճարպիկը

Լինում է, չի լինում մի սոված գայլ և մի ազնիվ արջ: Մի օր գայլը զբոսնելիս է լինում խոր անտառում: Հանկարծ թփերի միջից խշշոց է լսվում: Մտածում է՝ ինչ լավ կլիներ, եթե մի մոլորված գառ լիներ: Մեկ էլ նկատում է երկար ականջներ: Հասկանում է, որ թփերի հետևում նապաստակ է դողում: Գայլը գոռում է՝ դու՛րս արի, քեզ չեմ ուտի, եթե ինձ տանես գառնուկի մոտ: Նա, խորամանկության դիմելով, փորձում է նապաստակի վստահությունը շահել: Միամիտ նպաստակը հավատում է նրան և դուրս է գալիս, սակայն գայլը հարձակվում է նապաստակի վրա, որ ուտի: Որտեղից որտեղ մի արջ է հայտնվում, մա պաշտպանում է նապաստակին, գայլին ամոթանք է տալիս՝ թույլի վրա հարձակվելու համար և քշում նրան անտառի ծայրը: Հետո իրենից գոհ ազնիվ արջը մտածում է, որ ինքն աշխարհի ամենաարդար կենդանին է և արժանի է ամենալավին: Որոշում է ինքն իրեն պարգևատրել: Խորամանկորեն փորձում է հարձակվել նապաստակի վրա: Նապաստակը հասկանում է

արջի մտադրությունը և մտածում է, որ գայլն ու արջը սոված են և սկսում է խղճալ նրանց: Նապաստակը հասկանում է նաև, որ նրանք մեղավոր չեն, որ ուզում են ուտել իրեն, մեղավորը հենց ինքն է, որ այնքան թույլ է, որ իրեն բոլորը որսի տեղ են դնում: Նա որոշում է ուժեղանալ և դառնալ այնքան ճարպիկ ու արագավազ, որ ոչ մի կենդանի իրեն չուզենա ուտել և չդառնա մեղավոր:

Էմմա Սահակյան

Ողջույն, ես Էմմա Սահակյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի սեպտեմբերի 18-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Սիրում եմ երգել, պարել, նկարել: Հաճախում եմ նկարչական դասերի, ինչպես նաև լողի: Ունեմ շատ ընկերներ և՛ դպրոցում, և՛ խմբակներում: Օրվա մեծ մասն անցկացնում եմ դասերս ու հանձնարարություններս կատարելով և դա ինձ շատ է դուր գալիս, որովհետև հասկանում եմ, որ լավ մարդ ու լավ մասնագետ դառնալու համար պետք է լավ սովորել: Ուզում եմ բժիշկ դառնալ ու բուժել երեխաներին: Բայց միևնույն է, ինչքան էլ սիրեմ իմ դպրոցը, անհամբեր սպասում եմ ամռանը, երբ կսկսվեն արձակուրդները: Ամառը տարվա իմ ամենասիրելի եղանակն է: Երբ կարող ես ճամփորդել, լողալ, պառկել տաք ավազին և հանգստանալ ամբողջ ընտանիքի հետ միասին, որպեսզի աշնանը նորից վերսկսեմ ուսումս թարմ ուժերով: Սիրում եմ նաև աշունը: Չէ՞ որ հենց աշնանն է իմ ծննդյան օրը:

Եթե դուք ուզում եք ավելին իմանալ իմ մասին, կարող եք այցելեք իմ բլոգ: Սա իմ բլոգի հասցեն է https://emmasahakyan.edublogs.org

Օգնություն

Մի անգամ ինձ մոտեցան պլաստիլինե մի քանի մարդուկ և աղմկելով խնդրեցին իմ օգնությունը: Պարզվեց, որ իրենց տիրուհին՝ Էլզան, գնացել էր անտառ՝ սունկ հավաքելու և դեռ չէր վերադարձել: Ես նրանց ցույց տվեցի անտառ տանող ճանապարհը: Երբ մարդուկները մտան անտառ, խորքից լսվեց Էլզայի ձայնը: Նա օգնություն էր խնդրում: Մարդուկները վազեցին ձայնի կողմը և տեսան գայլին՝ Էլզայի դիմաց կանգնած: Մարդուկները աղմկելով շեղեցին գայլի ուշադրությունը: Գայլը նրանց չէր տեսնում, բայց վազում էր ձայնի ուղղությամբ: Վերջապես հասան ձորի եզրին: Մարդուկները կանգնեցին, իսկ գայլը գլորվեց ձորը: Էլզան հուզմունքից արտասվում էր, քանի որ իր պլաստիլինե հավատարիմ մարդուկները փրկեցին իրեն:

Ելակի ծառերի անտառում



Մի անգամ ես և ընկերուհիներս որոշեցինք գնալ անտառ՝սունկ հավաքելու:Երբ մտանք անտառ,նկատեցինք,որ մեր ծանոթ անտառը այլևս չկա:Մենք հայտնվել էինք ելակի ծառերի անտառում:Զարմացած նայում էինք մեր շուրջը:Մեզ թվում էր,թե հայտնվել ենք հեքիաթում:Հետո սթափվեցինք,մեր զամբյուղները ելակով լցրեցինք և տուն վերադարձանք:Մենք շտապում էինք բոլորին պատմել այդ հրաշքը:

Արսեն Մաթևոսյան

Ես Արսեն Մաթևոսյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականի օգոստոսի 15-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Տասնհինգամյա նավապետը» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում գրքեր կարդալ, նաև սիրում եմ լողալ, հեծանիվ վարել, ֆուտբոլ խաղալ: Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ Ֆուտբոլիստ: Ես ազատ ժամանակ, Ֆուտբոլ եմ խաղում բակում: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ համակարգչային ուսուցողական խաղեր: Ես շատ եմ սիրում սովորել իմ դպրոցում:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://arsenmatevosyan.edublogs.org/

Օգնող շունը



Նա գնաց այդ կույրերին օգնելու դպրոցը և նա պետք էր մեկ փորձություն անցներ: Նրան հաջողվեց անցնել մի կերպ: Եվ եկավ ժամանակը, նա իր ուսուցիչին պետք է տաներ: Իր ուսուցչի աչքերը փակ էին: Շունը անցնելուց իր ուսուցչին գցեց գետնին, և նրան հանեցին դուրս այդ դպրոցից: Նա հեռվում նկատեց ինչ-որ կույր մարդու և գնաց օգնության: Բոլոր շները ուզում էին օգնել, բայց չհասցրեցին: Այդ շունը գնաց օգնության և օգնեց այդ կույր մարդուն: Նրան ասաց, շնորհակալություն և այնտեղից բոլորը նրան տեսան և հետ ընդունեցին դպրոց և նրան կոչեցին ամենալավ հերոսը այդ դպրոցի:

Գագիկ Սարիբեկյան

Ես Գագիկ Սարիբեկյան եմ: Ծնվել եմ 2014 թվականի օգոստոսի 8-ին՝ Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Իմ վերջին կարդացած գիրքը «Անօրենն անպատիժ չի մնա» գիրքն է: Ես շա՛տ եմ սիրում ֆուդբոլ խաղալ, նաև սիրում եմ հեծանիվ վարել, Երբ մեծանամ ուզում եմ դառնալ ոստիկան: Ես ազատ ժամանակ կարդում

եմ, լինում է նաև, որ կիսատ դասերս եմ ավարտում, մայրիկիս համար սուճ եմ պատրաստում, մի քիչ համակարգչային խաղեր եմ խաղում: Ես ուզում եմ ունենալ շուն և կատու: Ես ունեմ շա՛տ ընկերներ: Ընկերներիս հետ խաղում եմ ֆուդբոլ խաղալ:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝https://gagiksaribekyan.edublogs.org/

Ծիածանի ճամփորդությունը

Լինում է չի լինում, մի ծիածան է լինում: Այդ ծիածանը չի ունենում ընկերներ, և որոշում է ճամփորդել ուրիշ երկիր, որ իր համար ուրիշ ընկերներ գտնի: Գտնում է նոր ընկերներ, պատմում է իր ընկերներին և իր ընկերներն ասում են.

– Ինչպես մեր հետ ընկերացար, գնա նույն կերպ նրանց հետ ընկերացիր:

Ծիածանը լսում է իր ընկերներին և գնում ծանոթանում է, և ունենում է նոր ընկերներ:



Մուրադ Հունանյան

Ես Մուրադ Հունանյանն եմ: Ծնվել եմ 2014 թվականին Երևանում: Սովորում եմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Արևմտյան դպրոցի 3-րդ դասարանում: Ես շա՛տ եմ սիրում լողալ, ինքնագլոր վարել, նկարել, նվագել: Երբ մեծանամ ուզում եմ դառնալ ծրագրավորող, սիրում եմ ստեղծել համակարգչային խաղեր: Ես ազատ

ժամանակ խաղում եմ, կարդում եմ, քույրիկիս հետ խաղում ենք տարբեր խաղեր: Ես ուզում եմ ունենալ շա՛տ ուժեղ համակարգիչ, որ խելացի խաղեր ստեղծեմ, ու խաղամ լավ խաղեր: Սիրում եմ քշել իմ ինքնագլորը, շատ եմ սիրում խաղալ: Ես սիրում եմ ուտել բուրգեր, պիցցա, տապակած կարտոֆիլ:

Եթե դուք ուզում եք ավելի շատ բան իմանալ իմ մասին, պետք է այցելեք իմ բլոգ: Ահա իմ բլոգի հասցեն՝ https://muradhunanyan.edublogs.org/

Հզոր համակարգիչը

Կար-չկար մի համակարգիչ կար: Նա շատ էր սիրում նկարել, հետաքրքիր նորություններ պատմել: Բայց մի օր համակարգիչը սկսել էր դանդաղ աշխատել: Նրան տարան մասնագետի մոտ, որ վերանորոգեն: Մի բարի տղա, որը պետք է վերանորոգեր համակարգիչը, տեսավ որ այն շատ ինֆորմացիայից թուլացել է: Տղան մի սարք տեղադրեց համակարգիչի մեջ, որ համակարգիչն ավելի լավ աշխատի: Համակարգիչը այնքան հզորացավ, որ սկսեց հետաքրքիր ուսուցողական խաղեր ստեղծել: Երեխաները շատ սիրեցին այդ համակարգչին: